

հետու է, և հրաշալի գեղեցկութեամբ զարդարուած պարտէզներու մէջ հաստատուած :

Գաղա հելլենական հեթանոսութեան կեդրոն մը եղած էր, և հետևաբար քիչ տրամադիր քրիստոնէութիւնը ընդունելու: Հակառակ ասոր, շատ կանուխէն կազմուած է քրիստոնէական համայնք մը: Փիլեմոն՝ որուն Ս. Պօղոս իր թուղթերէն մին գրեց, անոր առաջին եպիսկոպոսն էր: Ուրիշ մը՝ Ս. Սիդուանոս, 310 ին նահատակուեցաւ՝ ըստ Եւսեբիոսի: Գաղացի Ասղեբիաս ներկայ եղաւ Նիկիոյ ժողովին: Թապաղացի Իլարիոնի հրաշքները, Ս. Պորփիրի (Գ. կամ Դ. եպիսկոպոսը) և մանաւանդ կայսերական հրովարտակները ջնջեցին հեթանոսութիւնը Ե. դարու սկիզբը: Մարնա դից տեղւոյն վրայ կառուցուեցաւ խաչածառ մայր եկեղեցի մը Զ. դարու վախճանին: Անտոնինոս ճանապարհորդը հոն գտաւ «փառաւոր քաղաք մը որ ունէր հինգ գեղեցիկ եկեղեցիներ և հիւրընկալ քաղաքացիներ»: Բայց 634 ին, Օմար խալիֆայի Ապու Պէքիր զօրապետը գրաւեց զայն, և ժ.Ֆ. դարուն Սաչակիրները հոն անապատ մը գտան գրեթէ: 1149 - 1799 անընդհատ պատերազմներ տեղի ունեցած են և անպակաս եղած քրիստոնեայ նահատակներ (Bar. gd. էջ 508 - 509):

Գաղայի եկեղեցիներէն մին ունի աւանդութիւն մը՝ որուն համաձայն կ'ըսուի թէ սուրբ ընտանիքը երեք օր հանգստացած է այնտեղ Եգիպտոս փախած ժամանակ: Գաղայի մէջ նշանաւոր են Ս. Յովհաննէս Մկրտչի մայր եկեղեցին, երբեմն մեհեան, իսկ այժմ մզկիթ և Ս. Պորփիրի եկեղեցին (Mis. էջ 188):

Գաղան գտնուելով Եգիպտոսի սահմանին վրայ, անկէ Երուսաղէմ եկող հայ ուխտաւորները կուգային